ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀՐԱՀԱՆԳ

ԿՈԼԽՈԶՆԵՐՈՒՄ ԶԻՆԱՊԱՐՏՆԵՐԻ ՅԵՎ ՔԱՇԻՉ ՈՒԺԻ ՀԱՇՎԱՌՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԱՐԱԲԵՐՅԱԼ

355.2
Ժ-21

ՊԵՏՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ ՅԵՐԵՎԱՆ
1934 Թ.

355.2
Ժ-21

12 5 APR 2013

ՕՏԻՏՐ. ՊԵՏԱՐԱՆ Ս.Հ.Հ.
Ինվ. № 959 Ֆ3

- MAR 2010

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀՐԱՀԱՆԳ

ԿՈԼԽՈԶՆԵՐՈՒՄ ԶԻՆԱՊԱՐՏՆԵՐԻ ՅԵՎ ՔԱՇԻՉ ՈՒԺԻ ՀԱՇՎԱՌՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Զինապարտների և քաշիչ ուժի հաշվառման նպատակն է՝ տեղեկություններ տալ զինվորական վարչությունում ունեցող քաղաքացիների քանակի մասին՝ ըստ զինվորական մասնագիտությունների, կուսակցության և սոցիալական դրության, և ձիերի քանակի մասին՝ ըստ տեսակների և ձիերի ձիասայլերի մասին՝ ըստ տիպարների: Այդ տվյալներն անհրաժեշտ են թե խաղաղ և թե պատերազմի ժամանակ ԲԳԿ Բանակի համալրման վերաբերյալ նկատառումներ կազմելու համար:

2. Զինապարտների հաշվառումը ԽՍՀՄ տերիտորիայի վրա կենսագործվում է տեղական ռազմական վարչության որգանների, շրջգործկոմների, գյուղխորհուրդների, կոլտնտեսությունների, խորհտնտեսությունների և գործարանների ու ֆաբրիկաների կողմից:

3. Զինապարտների հաշվառումն այն է՝ վոր հաշվառման յենթակա քաղաքացիները ցուցակագրվում են հաշվառու մարմիններում և զինվորական տոմսեր են ստանում:

4. Հաշվառու մարմինների ընդհանուր ղեկավարությունը, վերահսկողությունն ու հրահանգումն իրագործվում են շրջ. ռազմական կոմիսարիատների կողմից:

5. Զինապարտների հաշվառումը բաժանվում է հետևյալ տեսակների.—

ա) նախազորակոչային,

բ) ընդհանուր,

41.111

դ) հատուկ...

դ) առանձնակի յերկաթուղային ու ջրային:

6. Նախակոչիկների հաշվառման յենթակա յեն՝ «պարտադիր զին. ծառայության որենքի» համաձայն իսկական զինվորական ծառայության յենթակա քաղաքացիները:

7. Ընդհանուր հաշվառման մեջ են գտնվում մնացած բոլոր զինապարտները:

8. Հատուկ հաշվառման մեջ գտնվում են այն զինապարտները, վորոնց քաղաքացիական մարմիններում ըստ իրենց աշխատանքի տեսակի տարկետումներ են տրված մոբիլիզացիայի դեպքում և պատերազմի ժամանակ (ձեռնարկություններին և պետհիմնարկներին ամրացվածները):

9. Հաշվառման յենթակա զինապարտների հաշվառման նշանները վորոշվում են նրանց զինվորական տոմսերում յեղած նշումների համաձայն:

10. Հաշվառման մեջ մտցնելու յենթակա յեն 21 տարեկանից մինչև 40 տարեկանը ներառյալ տարիք ունեցող միայն այն քաղաքացիները, վորոնք իրենց առողջության վիճակով պիտանի յեն զինվորական ծառայության համար:

11. Այն քաղաքացիները, վորոնց 40 տարին լրանում է հաջորդ տարվա հունվարի 1-ին, բոլորովին հանվում են զինապարտների հաշվառումից:

2. ՆԱԽԱԿՈՉԻԿՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

12. Զինապարտների սկզբնական հաշվառման մեջ ընդունումը կատարվում է նախակոչիկների զինակոչի չրջաններին կցագրելու հետ միաժամանակ:

13. Նախակոչյան հաշվառման յենթակա յեն ԽՍՀՄ արական սեռի բոլոր այն քաղաքացիները, վորոնց 21 տարին լրանում է այն թվականի հունվարի 1-ին, յերբ նրանք յենթակա յեն զինակոչի, իսկական զինվորական ծառայության համար անկախ ճայնազուրկ լինելուց, և կրոնական համոզմունքներով զինվորական ծառայությունից ազատվելուց:

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ ГОС БИБЛИОТЕКА ՀՍՍՌ ՀԱՅ ССР Ա. Մ. Գորկու անվան

42729.63

14. Նախակոչիկները հաշվառման են ընդունվում հետևյալ դեպքերում.

ա) զորակոչի տարվա հունվարի 1-ին 21 տարեկան դառնալիս:

բ) ԲԳԿ Բանակում կամավոր ծառայությունից ազատվելիս, յեթե նրանք ազատված են մինչև նրանց հասակակիցների զինծառայության կանչվելը:

գ) Արտասահմանից վերադառնալիս, յեթե նրանք վերադարձել են մինչև նրանց հասակակիցների իսկական զինվորական ծառայության կանչվելը.

դ) ԽՍՀՄ հպատակություն ընդունելու դեպքում:

15. Նախակոչյան հաշվառման ժամանակավորապես յենթակա չեն.

ա) վարչական կարգով աքսորվածները և արտաքսվածները արտաքսման ամբողջ ժամանակամիջոցում.

բ) ազատազրկման վայրերում գտնվողները, ազատազրկման ամբողջ ժամանակամիջոցում.

գ) հիվանդանոցներում բժշկվողները հիվանդության ընթացքում:

16. Նախակոչյան հաշվառումից հանվում են.

ա) ԲԳԿԲ կամավոր ծառայության ընդունվելիս,

բ) զորակոչի հետևանքով կադրային և յերկրային զորամասեր նշանակվելիս, թիկունքային աշխարհազորի մեջ նշանակվելիս և կրոնական համոզմունքներով զինվորական ծառայությունից ազատվելիս.

գ) արտասահման մեկնելու ժամանակ:

3. ԶՈՐԱԿՈՉԻ ՇՐՋԱՆՆԵՐԻՆ ԿՑԱԳՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

17. Կոլխոզնախագահը զորակոչի չրջաններին կցագրելու հրամանն ստանալուց հետո, այդպիսին փակցնում է աչքի ընկնող տեղերում, և միջոցներ է ձեռք առնում հրամանի մասին հայտարարելու յուրաքանչյուր կոլխոզնիկի— կոլխոզի ընդհանուր ժողովներում և բոլոր տների առանձին-առանձին չրջագայության միջոցով:

18. Կոլխոզնիկները կցագրման են ներկայանում

գյուղխորհուրդ կամ շրջգործկոմ— համաձայն հրամանի ունենալով իրենց հետ հետևյալ փաստաթղթերը.

ա) կրթության մասին,

բ) կուսակցականության մասին.

գ) սոցիալական և ընտանեական դրության մասին,

դ) Պրոֆմիության անդամներն իրենց անդամատոմսերը:

Ծանոթություն.— 1. Դրանից առաջ ԲԳԿ Բանակում ծառայածները ներկայացնում են զորամասի տեղեկանքները:

2. Կրոնական համոզմունքներով զին. ծառայությունից ազատվածները ներկայացնում են դատական մարմինների վորոշման պատճենը:

19. Կցադրման յենթակա քաղաքացիների կցադրման համար ներկայանալիս, զինտեսուչը ստուգում է նախակոչիկի կողմից ներկայացրած փաստաթղթերը և վերջինների ու ծխամատյանների հիման վրա կազմում է զորակոչային քարտը և զին. տոմսը:

20. Գրանցումից հետո, գյուղխորհուրդը պարտավոր է հայտնելու հաշվառու մարմնին նախակոչիկի ընտանեական-գույքային, կուսակցական և սոցիալական դրության մեջ տեղի ունեցած փոփոխությունների մասին և զորակոչիկին վերաբերող այլ տեղեկություններ:

21. Գյուղխորհուրդները և կոլխոզի նախագահները պատասխանատու յեն նախակոչիկների՝ սահմանված ժամկետներին նախնական բժշկական քննության լիովին ներկայանալու համար. այս նպատակով նրանք պարբերաբար ստուգում են նախակոչիկների բժշկական քարտերում բժշկական հիմնարկների կողմից արված նշումները:

22. Բժշկական պրոֆիլակտիկ միջոցներ կիրառելու համար գյուղխորհուրդը՝

ա) հատուկ բժշկական հիմնարկների յե կցում այն նախակոչիկներին, վորոնք նախնական բժշկական քննության պրոցեսում հիվանդ են հայտնաբերված և բուժման կարիք են զգում.

բ) հետևում է, վորպեսզի բոլոր նախակոչիկները յուրաքանչյուր ամիս ներկայանան բուժական հիմնարկը՝ հերթական բժշկական քննության.

գ) բացատրում է նախակոչիկներին, վոր նրանք խնամքով պահեն բժշկական կարտերը, նկատի ունենալով, վոր այդ քարտերն իրրև անհրաժեշտ փաստաթուղթ է ծառայելու զորակոչային հանձնաժողովի համար՝ նախակոչիկի պիտանիության հարցը վորոշելու:

23. Կցադրման ժամանակ հայտնաբերված անդրադետ և կիսադրադետ նախակոչիկներին կցում է լիկվայաններին և հետևում է նրանց կողմից պարապմունքները կանոնավոր հաճախելուն, այն պայմանով, վոր մինչև բժշկական քննությունն սկսելը վոչ մի անդրադետ կամ կիսադրադետ նախակոչիկ չմնա:

24. Կոլխոզնախագահները պետք է անդուլ հետևեն, վորպեսզի նախակոչիկները ճշտապահորեն հաճախեն վարժական կայաններում տեղի ունեցող նախակոչային պարապմունքները:

25. Զորակոչի տարվա հունվար ամսին գյուղխորհրդին կից կազմակերպվում է զորակոչին աջակցող հանձնաժողով՝ գյուղխորհրդի, կոմբջիջի, ԼԿՅԵՄ-ի բջիջի և կոլտնտեսության վարչության ներկայացուցիչներից բաղկացած, վորն իր աշխատանքի ասպարեզում ղեկավարվում է շրջգործկոմի ցուցումներով:

4. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՇՎԱՌՈՒՄ

26. Ընդհանուր հաշվառման յենթակա յեն ԽՍՀՄ միության տերիտորիայում բնակվող արական սեռի այն քաղաքացիները, վորոնք իրենց առողջության վիճակով պիտանի կամ սահմանափակ պիտանի յեն զին. ծառայության համար, յեթե նրանց զորակոչի տարիքում չի տրված մոբիլիզացիայի դեպքում և պատերազմի ժամանակ:

27. Ընդհանուր հաշվառման յենթակա տղամարդիկ հաշվառման են յենթարկվում հետևյալ հատկանիշերով՝

ա) ըստ հաշվառման խմբակների, նկատի առնելով

նրանց ծառայությունը. ԲԳԿԲ այս կամ այն մասում (ԲԳԿԲ, ԲԳԿ նավատորմ, ծովափնյա պաշտպանություն, ՄՊԲՎ).

բ) պատերազմի ժամանակվա բանակի համալրման կարգով— կցագրվածները և չկցագրվածները.

գ) ըստ ստացված ռազմական պատրաստության հատկանիշի—շարքային կամ կրտսեր հրամկազմ և զինհաշվառման մասնագիտություններ.

28. Ընդհանուր հաշվառումից հանվում են հետևյալ դեպքերում.

ա) արտասահման գնալու դեպքում,

բ) թիկունքային աշխարհազորի մեջ մտցնելու դեպքում,

գ) վարչական կարգով աքսորվելու և արտաքսվելու դեպքերում,

դ) վորպես կամավոր կամ մոբիլիզացիայի կարգով ԲԳԿԲ ընդունվելու դեպքում.

ե) ՄՊԲՎ մարմիններում ծառայության ընդունվելու դեպքում, այդ մարմիններից հաղորդագրություն ստանալուց հետո.

զ) հատուկ և հատուկ յերկաթուղային ու ջրային հաշվառման ընդունվելու դեպքում (բրոնիայի յենթարկվածները, յերկաթուղային ու ջրային հաշվառման ընդունվածները).

ը) միջին, ավագ և բարձր պետ. կազմի հաշվառման մեջ փոխադրվելու դեպքում:

թ) մշտապես ապրելու բնակավայրը փոխելու դեպքում յերկու ամսից ավելի ժամանակով, յեթե նոր ընտրված բնակավայրը գտնվում է զին. հաշվառման մի այլ մարմնի շրջանում:

Ընդհանուր հաշվառումից հանվում են հետևյալ դեպքերում՝

ա) ռտարերկրյա հպատակություն ընդունելու դեպքում.

բ) զին. ծառայության համար ըստ իրենց առողջության վիճակի վոչ պիտանի լինելու դեպքում.

գ) հաշվառման մեջ գտնվելու սահմանված տարիքը լրանալու դեպքում.

դ) մահվան դեպքում:

29. Հաշվառման մեջ գտնվող բոլոր զինապարտների համար, վորպես զին. հաշվառման փաստաթուղթ, հանդիսանում է նրանց զինվորական տոմսը:

30. ԲԳԿ Բանակի կադրերից և տերիտորիալ յերկրային զորամասերի փոփոխական կազմից արձակված զին. ծառայողները և զինապարտները կամ նոր բնակության վայրը յեկողները՝ հաշվառման ընդունվելու համար դիմում են չրջգործկոմի զին. հաշվառման մարմնին անմիջականորեն կամ գյուղխորհրդի միջոցով, նայած իրենց անձնական հարմարություններին:

31. Կոլխոզները համաձայն զինապարտների ռազմական տոմսերի կազմում են անվանացուցակ այս հրահանգին կցված № 1 հավելվածի ձևի բոլոր այն զինապարտների, վորոնք զորամասերին կցագրված չեն և գտնվում են ընդհանուր հաշվառման մեջ:

Այն զինապարտների, վորոնք կցագրված են զորամասերին կազմվում է № 2 հավելվածի ձևի անվանացուցակ:

Ամեն ամսի 20-ին կոլխոզ նախագահները ցուցակներում կատարված փոփոխությունների մասին հայտնում են ՄՏԿ հատուկ բաժնին: (Կոլխոզից հեռացող զինապարտների, հաշվառման նոր ընդունվող զինապարտների, մահացածների և այլն):

32. Զինապարտի տոմսը կորցնելու դեպքում կոլխոզնախագահները ուղարկում են զինապարտի դիմումը չրջգործկոմի զին սեղանին:

33. Հաշվառումից հանելու համար կոլխոզի նախագահը զինապարտի զինտոմսը գյուղխորհրդի միջոցով ուղարկում է գործկոմի զին սեղանը հաշվառումից հանելու համար նշումներ անելու, վորից հետո տոմսը վերադարձնում է զինապարտին:

34. Կոլխոզվարչությունը պետք է խստորեն հետևի ցուցակների վիճակին և ձգտի, վոր այդ ցուցակները մաքսիմալ չափով ռեալ լինեն:

35. Տարեկան 2 անգամ հունվարի 1-ին և հուլիսի 1-ին կոլխոզ նախագահները ցուցակները ներկայացնում են ՄՏԿ հատուկ բաժնի պետին, իսկ վերջինս շրջգործկոմի զին սեղանում ստուգում է քարտատեկայի տվյալների հետ:

Բացի վերոհիշյալից կոլխոզ նախագահները զինապարտների անվանացուցակները 3 ամիսը մեկ անգամ ստուգում են գյուղխորհուրդներում ունեցած զինապարտների ցուցակների հետ:

9. ՁԻԵՐԻ ՑԵՎ ՍԱՅԼԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

36. Ռազմական գերատեսչության գծով կատարվում է միայն զորամասերում ծառայելու համար պիտանի ձիերի հաշվառում:

37. Ռազմա-ձիական հաշվառումը կատարվում է՝

ա) ամբողջ ձիակազմը պարբերաբար ու գլխովին ընդհանուր վերահաշվառման յենթարկելու միջոցով.

բ) ամեն տարի պիտանի ձիերը զննելու և հաշվառման տվյալները ճշտելու միջոցով.

գ) հաշվառման տվյալների համապատասխան վերամշակման միջոցով:

38. Ձիակազմի գլխովին ընդհանուր վերահաշվառումը կատարվում է մի քանի տարին մի անգամ, ԽՍՀՄ ամբողջ տերիտորիայում միաժամանակ, ԽՍՀ Միության կառավարության հատուկ վորոշման հիման վրա:

39. Յուրաքանչյուր տարի ձիերի զննումը և հաշվառման տվյալների ճշտումը կատարվում է շրջգործկոմների կողմից համաձայն շրջանային ռազմկոմատների ցուցումների, և նպատակ ունի պարզելու պիտանի ձիակազմի վիճակը հաշվառման տվյալներում տարվա մեջ տեղի ունեցած փոփոխությունների արտահայտումը, թե քանակի և թե կազմի նկատմամբ, և պիտանի ձիերի վերաբաշխումն ըստ ժողովրդական տնտեսության սեկտորների:

40. Ձիերի և սայլերի հաշվառման ստորին ողակը գյուղխորհուրդն է, վորը պատասխանատվություն է կրում գյուղխորհրդի ամբողջ տերիտորիայում հաշվառման վիճակի և շրջգործկոմի ժամանակին տեղեկություններ ներկայացնելու համար:

41. Ռազմա-ձիական սկզբնական հաշվառման աշխատանքներին մասնակից են արվում, կոլտնտեսությունները, խորհտնտեսությունները և այլ հիմնարկներն ու ձեռնարկությունները, վորոնք զորամասերի ծառայության համար պիտանի ձիեր ունեն:

42. Ձիերի հաշվառման փաստաթղթեր են հանդիսանում՝

ա) ձիերի հաշվառման քարտերը.

բ) ձիերի անցագրերը

43. Ձիու հաշվառման քարտը և անցագիրը նրա անձնական փաստաթուղթն է, վորը հաստատում է նրա պատկանելությունը և պարունակում է անհրաժեշտ տվյալներ ձիու տեսակի և վորակի մասին:

44. Ձիերի զննումը կատարելուց հետո գործկոմի զինսեղանը ձիաների հաշվառման քարտերը ուղարկում է կոլխոզվարչության վորտեղ և պահվում են մինչև հետևյալ ստուգումը:

45. Համաձայն ձիերի հաշվառման քարտերի կոլխոզը կազմում է հաշվառման տեղեկություն համաձայն № 3 հավելվածի ձևի կոլխոզի և բոլոր կոլխոզնիկների ձիաների և ձիասայլերի տեղեկության մեկ որինակը ուղարկում է ՄՏԿ հատուկ բաժնին և սիստեմատիկաբար փոփոխությունների մասին (սատկելու, վաճառելու, կորչելու) հայտնում վերջինին:

46. Քարտատեկայում ձիերի հաշվառման քարտերը պետք է դասավորված լինեն ըստ ձիերի տեսակների: Յուրաքանչյուր տեսակի քարտերը պետք է առանձնացված լինեն միջադիրներով, վորոնց վրա նշանակվում է յուրաքանչյուր տեսակի ձիերի ընդհանուր քանակը:

47. Կոլխոզ վարչության քարտուղարը ձիուն հաշվառումից հանում է նրա հաշվառման քարտը քարտատեքստից հանելով:

48. Հաշվառումից հանելը կատարվում է ամեն տարի հաշվառման տվյալները ճշտելու ժամանակ:

49. Հաշվառման ընդունելը կատարվում է յուրաքանչյուր տարի, հաշվառման տվյալներն ամեն տարի ճշտելու ժամանակ, տարվա մնացած ժամանակ ձիերը հաշվառման չեն ընդունվում:

50. Բոլոր կոլխոզվարչությունների վրա ընդհանուր պարտականություն է դրվում հետևելու ձիերի պահպանման և շահագործման վրա և պայքարելու նրանց ապօրինաբար մորթելու դեմ: Դրա համար գյուղխորհուրդները պարտավոր են ձիակազմի վիճակի մասին ընտրովի հետազոտություններ կատարել:

51. Սայլերի հաշվառումը կատարվում է:

ա) բոլոր սայլերի ընդհանուր ցուցակագրումով.

բ) յուրաքանչյուր տարի մեկ անգամ պիտանի սայլերի քանակի վերաբերյալ տեղեկությունները ճշտելու միջոցով:

52. Բոլոր սայլերի ընդհանուր ցուցակագրումը կատարվում է մի քանի տարին մեկ անգամ բոլոր ձիերի ընդհանուր վերահաշվառման հետ միաժամանակ:

53. Պիտանի սայլերի հաշվառման տվյալների ճշտումը կատարվում է յուրաքանչյուր տարի ձիերի վերաշննության և հաշվառման տվյալները ճշտելու հետ միաժամանակ:

54. Պիտանի սայլերի քանակի մասին տեղեկություն զին. հաշվառման մարմինների կողմից մտցվում են ձիերի ընդհանուր հաշվառման տեղեկությունների մեջ:

55. Զին հաշվառման մարմինները անհատական քարտեր սայլերի մասին չեն լրացնում:

56. Հաշվառման յենթակա յեն միաձի, յերկձի, յեռաձի և քառաձի սայլերը: Միաձի սայլերը բաժանվում են ըստ յերկաթե և փայտե սռնի ունեցող սայլերի: Մնացած սայլերից յենթակա յեն հաշվառման միայն յերկաթե սռնիներ ունեցողները:

57. Կոլտնտեսարչությունը կազմում է բոլոր սայլատերերի անվանական ցուցակը № 3 հավելվածի ձևով:

Հավելված № 1

ՑՈՒՑԱԿ

կոլխոզում մեջ գտնվող _____

(գյուղխորհրդի անունը)

Ձիերի հաշվառման

№ № գծագրի	Անվանում, անուն ձիերի հայրանունը	Ձիերի քանակը	Շարքային կամ պակարտիվ (կրտսեր, միջին, ավագ)	Դրսևորումներ և հիշատակություն	Դիագնոզ	Պատճառը (հարբուխի, կոլիկայի, էրիզիպելի, կարտ. անդամալուծ)	Ժամանակաշրջանը դեղերի ազդեցության հիմքերով	Ծանոթություն
1	2	3	4	5	6	7	8	9

Հավելված № 2

ՑՈՒՑԱԿ

.... կոլխոզում հաշվառման մեջ գտնվող կցագրված զինապարտների կազմի
(ցույց տալ կոլխոզի անունը)

№№ ըստ կարգի	Ազգանունը, անունը և հայրանունը	Զին. հաշվառման մասնագիտութ.	Կուսակցականությունը	Առող. դրությունը	Վոր զորամասին է կցված	Զորամաս նշանակված, ուր պետք է ներկայանալ	Նշումներ զորակոչի կետից ստացված մասին	

Հավելված № 3

ՀԱՇՎԱՌՄԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

.... Շրջանի .... կոլխոզի և կոլխոզնիկների ձիերի և սայլերի
(Շրջանի անունը) (գյուղխորհրդի անունը)

№№ ըստ կարգի	Ազգանուն, անուն և հայրանուն	Պիտանի ձիերի քանակը						Սայլեր				Քառաձի	Ընդամենը	Ծանոթություն
								միաձի						
		Հեծելու	Թեթև կրկնակ-ավոր զորակ լծելու	Ծանր կրկնակ-ավոր լծելու	Գութանային	Հրետանային	Ընդամենը	Ցերկաթե	Փայտե առան-ցքով	Ցերկձի	Ցեռաձի			

Պետհրատի տպարան. Գլավլիտ № 37. Պատվեր № 281. Տիրաժ 1000

ՊԵՏ. ԿԵՆ. ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС. БИБЛИОТЕКА
ՀԱՍՌ · им. ССР
ИМ. А. МЯСНИКЯНА

ՀՀ Ազգային գրադարան
NL0215614

41.111

5K

אל 1
אל 2